

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶ»- Հեղինակ՝ Առաքել Պատ-
րիկ: 1967, Երևան, 144 էջ:

Սրանից մի քանի տարի առաջ, Երևանում լոյս տեսան հայկական արուեստին ու արհեստին վերաբերող երկու կարևոր գրքեր՝ մէկը որպէս նուրբ արուեստ «Հայկական ժանեակ» անունով, աշխատասիրութեամբ Սերիկ Գալթեանի, իսկ միւսը որպէս հազուաժամ «Հայկական Տարազ» խորագրով, Հեղինակութեամբ Առաքել Պատրիկի:

Ստորեւ մի քանի խօսք «Հայկական Տարազ»-ի մասին:

Վերջին տարիներում Հայաստանում հրատարակուեցին մի քանի պատկերազրքեր, ձեռագրերի եւ այլ նման ալբոմներ, որոնց գեղեցիկ շարքին է պատկանում Առաքել Պատրիկի «Հայկական Տարազ»-ը եւ իր բանասիրական խորք ունեցող յառաջարանով, նոր ու ամբողջական տեղեկութիւններ է տալիս հայկական տարազի մասին, սկսեալ հին դարերից մինչեւ վերջին ժամանակները:

Հեղինակն իր «Ներածական» եւ «Պատմական համառօտ ակնարկ»-ով, անդրադառնում է հայկական տարազին եւ այն դանդան շրջանների բաժանելով ու տախտակների վերածելով, տալիս է կարևոր ու հետաքրքիր տեղեկութիւններ:

Գիրքն ունի 144 էջ, որի սկզբի 62 էջը բացատրական յօդուածներն են, ինչպէս եւ տախտակներին նկարագրութիւնները, որոնց համառօտ ցանկերը տրուել են նաեւ ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուներով:

Գրքի ամենակարեւոր մասը նրա ալբոմն է, որ բռնում է 82 էջ, անուանուած ու համարակալուած տախտակների ձեւով, որի 69 տախտակի պատկերները (1-57 եւ 69-82) սեւ ու ճերմակ են, իսկ 13 տախտակներ (22-23 եւ 58-68) գունաւոր: Ունի նաեւ մէկ գունաւոր ընդհանուր տախտակ: 69-82

տախտակները պատկանում են օտար ազգերի տարազների, որոնց թիւը հասնում է 14-ի:

Առաքել Պատրիկը մեծ աշխատանք տարել է հաւաքելու այս տարազները եւ նրանքները արժանի են գնահատութեան. բայց միաժամանակ պէտք է նկատենք որ այս ուսումնասիրութիւնից դուրս են մնացել Շահ Արքայի Մեծի Հայ դադթականութեան ժամանակից եղած պարսկահայ դադութին վերաբերող մի շարք տարազներ, յատկապէս զիւղական շրջաններին պատկանող:

Սպահանի նահանգի ներկայիս եւ անցեալում իրեն պատկանող մի քանի հայաբնակ դաւառներ ունեցել են եւ ունեն իւրաքանչեւ տարազաձեւեր, կանանց հագուստների գլխաշաքարանքների տարբեր ձեւերով, որոնցից ամենայատկանշականը եւ թերեւս դուռ ազդայինն ու հայկականը Փերիա դաւառի կանանց տարազն է, որ թէեւ համեմատած անցեալին՝ այժմ շատ բանով կրճատուած է, բայց պահուել է մինչեւ այսօր:

Պարսկահայոց տարազի մասին թէեւ հեղինակը խօսում է իր գրքում (էջ 15 եւ 33), բայց հիմնաւորապէս չի անդրադառնում դրան եւ անդամ լրիւ նմոյշներ էլ չկան ալբոմի նկարների մէջ:

Եղած պարսկահայոց տարազանկարները պատկանում են Չարմահալ դաւառին (տախտակ 38-ի համար 8 եւ 9): Սոյն տախտակի համար 8ը, որ Չարմահալի տարազ է, վերագրուել է Նոր Զուղային: Վերջինիս հին տարազից եւս լաւ ու հարազատ նմոյշ չկայ ալբոմում: Տախտակ 67-ի թիւ 1 գունաւոր նկարները իրական ու ամբողջական չեն:

Նոր Զուղայի կանանց տարազի լաւագոյն հին նմոյշը կարելի է տեսնել Մազամ Ժէն

Դիւլաֆոյի (Mrs. Jane Dieulafoy) "La Perse"
(Պարսկաստան) խիստ արժէքատուր գրքում
(Փարիզ, 1887, էջ 335) :

Մեր նպատակը չէ աշխտել մէկ առ մէկ
խօսել վերոյիշեալ Չարմաշալ, Բուրաբի,
Փերիա եւ միւս գաւառների տարազների մա-
սին, որոնցից իւրաքանչիւրը առանձին վեր-
ցրած կարօտ է լայն ուսումնասիրութեան
եւ միաժամանակ հետաքրքիր՝ այս գաւառ-
ների գաղթականութեան նշանները Հա-

յաստանում, իրենց տարազների դժուր պար-
զելու համար :

Այս մարդում մի կոյս աղբիւր է նաեւ
Նոր Զուգայի հանդատարանը, իր բազմա-
թիւ տապանաքարերով ու աշխտան տարազ-
ների պատկերաքանդակներով :

«Հայկական Տարաք»-ը մի գեղեցիկ աշ-
խատութիւն է, որ պէտք է կազմի իւրաքան-
չիւր պատկերի սեղանի զարդը :

Նոր Զուգա

Լ. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

